

«Հազարամյակի մարտահրավեր
հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ-ի
Գլխավոր գործադիր տնօրեն
պրն. Ա. Հովսեփյանին

պատճենը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարար
պրն. Ն. Երիցյանին

պատճենը՝ Հայաստանում Ամերիկայի Միացյալ
Նահանգների արտակարգ և լիազոր
դեսպան տիկին Մարի Յովանովիչին

Հարգելի պարոն Հովսեփյան,

Հանդիսանալով «ՀՄՀ-Հայաստան» ծրագրի ընտրական հանձնաժողովի անդամ՝
իմ պարտքն էմ համարում Ձեզ տեղյակ պահել ստորև շարադրվածի մասին, որն, իմ
կարծիքով, կարող է բացասաբար ազդել ս/թ մայիսի 22-ին նշանակված՝ ՇԽ
անդամների՝ արդար և թափանցիկ ընտրությունների անցկացման վրա:

Ուսումնասիրելով «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի գրասենյակին ներկայացված
հայտերը, դրանց հիման վրա կազմված թեկնածուների ցուցակները և ընտրողերի
ցուցակները՝ պարզեցի, որ մի շարք հայտ ներկայացրած կազմակերպություններ
փոխկապված են՝ հետևյալ պատճառաբանությամբ: Այսպես, օրինակ, «Գյումրու
Մաշտոցի դպրոց» հիմնադրամի կողմից ներկայացված հայտի հետ մեկտեղ՝
նրանում ղեկավար պաշտոն զբաղեցնող անձ Մարգարետունի Զադոյանի
թեկնածությունն առաջադրելու վերաբերյալ, ներկայացվել է նաև հայտ Համայնքային
նախաձեռնությունների և աջակցությունների կենտրոնի կողմից, որի Նախագահը
նույնպես Մարգարետունի Զադոյանն է, իսկ կազմակերպության կողմից առաջադրված
ընտրողը՝ ընտրական հանձնաժողովի անդամ Գայանե Գևորգյանը:

Նմանատիպ փոխկապվածությամբ աչքի են ընկել նաև «Գիրք» հիմնադրամը,
«Հայ մտավորական կին» ՀԿ-ն, «Բենիկ Պետրոսյան» մշակութային կենտրոնը,
որոնցում ղեկավար անձ է հանդիսանում Ալիս Ադամյանը, Խաղողի, բանջար-
բոստանային կուլտուրաների աճեցման և իրացման «Այգեգործ» սպառողական
կոոպերատիվը և «Այգեվան» գյուղատնտեսական վարկային ակումբ ոչ առևտրային
կոոպերատիվը, որոնց նախագահը Միմոն Ասատրյանն է և այլն:

«Հայաստան» ՊՈԱԿ
Մուտքի № 2/թ-1576
մասթիվ 20.10.5/10

Փաստորեն, ստացվում է, որ հիշատակված անձանց դրսևորած վարքագծի հետևանքով անտեսվելու է «մեկ ձայնի սկզբունքը», քանի որ որոշ անհատների արհեստականորեն հնարավորություն է տրվում հավաքելու երկու և ավելի լրացուցիչ ձայներ:

Հիմք ընդունելով այն, որ ՀՄՀ-Հայաստան ծրագրի շահառուների խորհրդի և կառավարման խորհրդի անդամների ընտրությունների կարգը որևէ կերպ չի կարգավորում հայտատուներին բացարկ հայտնելու հարցը՝ հիմք ընդունելով նրանց փոխկապվածությունը, խնդրում եմ ուշադրություն հրավիրել վերոնշյալ խնդրի վրա՝ այն լուծելու նպատակով ձեռնարկելով անհրաժեշտ և բավարար միջոցներ:

Դիմող՝ «ՀՄՀ-Հայաստան» ծրագրի
ընտրական հանձնաժողովի անդամ՝

Սևեհ

Լ. Քամայան

18.05.2010թ.

*ստաստիստիկա ուղղությամբ կարգավորվել է
և կողմից
Սևեհ Գ. Բաբայան*

Օրհանյան Ե. Կարգավորվել է հարցը բացարկային չէր.

Կարգավորվել է անհրաժեշտ է հարցը Գ. Բ. Բաբայան

19.05.2010թ

Կարգավորվել է անհրաժեշտ է

Գ. Բ. Բաբայան

Ս. Բաբայան